

---

## ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՆՈՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ XVI-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

### ՆՈՐԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայերենագիտությունը դարձվածքների ուսումնասիրության հարուստ ավանդույթներ ունի: Բազմաթիվ մենագրությունների ու հոդվածների շարքում բավական է նշել միայն շուրջ 16 հազար դարձվածային միավոր պարունակող «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (ՀԼԴԲ)<sup>1</sup>: Հայերենի բարբառների դարձվածքների մասին մեծաքանակ տվյալներ են պարունակում Յ. Աճառյանի, Ս. Անատոլունու և այլոց աշխատությունները<sup>2</sup>: Գրաբարի դարձվածային միավորներին է նվիրված վերջերս հրատարակված՝ Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանը»<sup>3</sup>, որն ընդգրկում է 5-11-րդ դարերուն վկայված գրաբարի դարձվածքներն ու կայուն բառակապակցությունները՝ դրանց բնագրային վկայակոչումներով:

Դարձվածքների համեմատ գիտական հետաքրքրությունը չի մարել նաև վերջին տասնամյակում, երբ թենայի վերաբերյալ հրատարակվել են մենագրություններ, տարբեր հոդվածներ<sup>4</sup>: Որպես հայերենագիտության վերջին տարիների արդյունք՝ հատուկ պետք է նշել Պետրոս Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը»<sup>5</sup>: 1404 մեծադիր էջանոց այս բառարանը պարունակում է ավելի քան 25 հազար դարձվածային միավոր (ԴՍ)՝ քաղված գրական ու խոսակցական արևելահայերեն, արևմտահայերեն, ինչպես նաև բարբառային աղբյուրներից ու բանավոր խոսքից: Պ. Բեդիրյանի բառարանի մասին հոդվածներ, կարծում ենք, դեռ կգրվեն, այստեղ միայն նշենք, որ հեղինակը տալիս է գլխարառը, դրա տակ համապատասխան դարձվածքները, տարբերակները, բնագրային մեջբերումը և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Սուրիփասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

<sup>2</sup> Տե՛ս Յ. Աճառյան, Գալստյան բառարան, Թիֆլիս, 1913, Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Կաղարշապատ, 1912, Կ. Գարիկեան, Բառգիրք Սեբաստահայ գալստյան, Երևան, 1952:

<sup>3</sup> Տե՛ս Ռուբեն Ղազարյան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012: Բառարանը հրատարակվել է հեղինակի վախճանից անմիջապես հետո:

<sup>4</sup> Նկատի ունենք հատկապես հետևյալ աշխատությունը՝ Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000: Չիշատակելի են նաև Շ. Շահինյան, Նոր Նախիջևանի բարբառի դարձվածաբանական բառարան, Եր., 2011, Վ. Լեկիհաշվիլի, Դարձվածային միավորների դասակարգման ձևական չափանիշները (ռուս.), ԲԵՆ, 2002, 3, էջ 140-141, Ն. Մելրոնյան, Դարձվածքների ծագման և զարգացման առանձնահատկությունների հարցի շուրջ, ԲԵՆ, 2003, 1, էջ 193-198, Յ. Ղազարյան, «Կյանք» իմաստն արտահատող դարձվածքների իմաստային դաշտը, «Լրաբեր», 2009, 2, էջ 167-181 և այլն:

<sup>5</sup> Տե՛ս Պետրոս Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011:

Այդքանով հանդերձ՝ սպառված չի կարելի համարել հայերենի դարձվածքների ուսումնասիրումը: Քննության մեջ նոր բնագրեր ներառելու շնորհիվ ի հայտ են գալիս նորանոր դարձվածային միավորներ հատկապես վաղ աշխարհաբարից: Ներկա հրապարակման մեջ ի մի ենք հավաքել 16-րդ դարի վերջերից մինչև 18-րդ դարի սկիզբը ստեղծված բնագրերից քաղված մի շարք դարձվածային միավորներ: Այդ բնագրերի մի նաև գրաբարով է, մի նաև՝ աշխարհաբարյան տարրերով («ռամկախառն գրաբար»), մի նաև էլ գուտ բարբառային նկարագիր ունի: Այսինքն՝ բնորոշ կերպով ներկայացնում են վաղ աշխարհաբարյուն՝ մեր լեզվի մի ժամանակափուլը, որում գրաբարը, նոր կազմավորվող աշխարհաբարն ու բարբառները գոյակցում էին կողք կողքի: Այդ շրջանում ստեղծվել են պատմագրական, ժամանակագրական, գեղարվեստական, ուղեգորական բազմաթիվ երկեր, գրվել և պահպանվել են մեծ թվով հիշատակարաններ, վիմագիր արձանագրություններ, դիվանական փաստաթղթեր, կոնդակներ ու նամակներ: Դրանց մի ստվար մասը լեզվական քննության ուղղակի չի ենթարկվել, ուստի պատահական չէ, որ նրանցում ի հայտ են գալիս հնչյունական, բառապաշտային, իմաստային, ծևաբանական նոր և ուշագրավ իրողություններ: Մենք փորձել ենք վեր հանել դարձվածային նոր միավորներ:

\* \* \*

Մեր բերած դարձվածքների մեջ կառուցվածքի տեսակետից աչքի են ընկնում, նախ, բայական հարադրությունները, օրինակ՝ **այգի ծգել, անուն կտրել, ապուշ մնալ, գիր տալ, գլուխ քաշել, դաւի անել, դեհ անել, դղըրդ առնուլ, թֆանք ծգել, խապարի նայել, կարէցն անել, կիսու կտրել, հեծել քաշել, հրամանքն բռնել, մանչ ժողովել, մատ կոխել, մին մնու պատալ լինել, յիմն ծգել, ողողի տանել, չմարդի ունել, պիրկ կենալ, պլիկ կտրել, տրոր տալ, փայ և բաժին ընկնել, փայտ զարկել, քարի բռնել, քօմակ անել/լինել և այլն:**

Ակնառու է, որ դրանց մեջ գերակշռում են «գոյական+անորոշ դերբայ» կաղապարով կազմված ԴՍ-ները՝ **բասմայ տալ, երամ կապել, փայտ զարկել** և այլն: Ամենատարածված բայ-հարադրներն են՝ **տալ, անել** (գրաբարի **առնել-ի փոխարեն**), **ծգել, առնուլ, տանել, լինել**:

Հանդիպում են նաև ածականով, թվականով, դերբայով արտահայտված դարձվածքներ՝ **կանաչ գլուխ, կարմիր գտակ, մեծ մամ, մեծ պապ, օթը պորտ, հազար բերան, մին/մէկ բերան, գալող գնացող, յանցեալ ամ, գնալ ու գալ, իւր գլխու, միւս վաղն** և այլն:

Դարձվածային միավորների մեջ ըստ տարածվածության երկրորդը անվանական հարադրություններ են, ընդ որում՝ նախադաս անդամը կարող է դրված լինել տարբեր հոլովածերով, ինչպես՝ **աչացս լոյս, արեան մերձաւոր, գիր ուխտի, գտակ կորստեան, իսկ բանից, խաթրին համար, հոգուս հոգի, հոգոյ բաժին, հոռմի հաւատ, ծեռաց գիր, մահու դուռ, մատ գիր, յիշատակաց դպիր, շալէ շապիկ, տղայ մարդ, քօշ մօրուք** և այլն:

Կարելի է տեսնել նաև հոմանիշ դարձվածքներ՝ **մատ դնել-մատ կոխել, կարմիր գլուխ-կարմիր գտակ, աւել անուն-աւելորդ անուն** և այլն:

Ըստ բաղադրիչների իմաստի սերտաճման՝ լեզվաբանական գրականության մեջ դարձվածքները սովորաբար դասակարգվում են երեք հիմնական խմբերի: Մեր քաղաք դարձվածքների մեջ հանդիպում են բոլոր երեք խմբերի մեջ մտնող միավորներ:

ա) **Դարձվածային սերտաճումներ**, որոնց դեպքում բաղադրիչների իմաստը գրեթե կապ չունի դարձվածքի արտահայտած իմաստի հետ, ինչպես օրինակ՝ **անուն կտրել, խապարի նայել, հրամանքն բռնել, սիրտն թռնալ, փող ուտել**:

բ) **Դարձվածային միասնություններ**, երբ բաղադրիչների իմաստը ինչ-որ կերպ առնչվում է դարձվածքի իմաստի հետ՝ **կարմիր գտակ, կանաչ գլուխ, գլուխ քաշել, երամ կապել, խօսք բերել, հեծել քաշել, մատ դնել**:

գ) **Դարձվածքային կապակցություններ**, երբ դարձվածքի իմաստը գրեթե ամբողջովին հասկացվում է բաղադրիչներից, ինչպես՝ **այգի ծգել, արկաթ ծգել, բերնով ասել, գին տալ, գրքեր հանել, յեղ մնալ, հոռմի հաւատ**:

ԴՍ-ների կառուցվածքային տիպերի, նրանց անդամների շարահյուսական առանձնահատկությունների հարցն այստեղ չենք արձարժում՝ նոր ԴՍ-ներ ի հայտ բերելու վրա կենտրոնանալու նպատակով: Մանավանդ որ հայերենագիտության մեջ հարցը բավականաչափ լուսաբանվել է<sup>6</sup>:

Արհասարակ դժվար է հստակ սահմանազատել հարադրավոր բայերը կամ կայուն բառակապակցությունները դարձվածային միավորներից: Որպես կանոն, դարձվածաբանական աշխատություններում և մանավանդ բառարաններում կարելի է գտնել թե՛ բուն դարձվածքներ ու իդիոմներ, թե՛ կայուն բառակապակցություններ ու արտահայտություններ, որոնցում իմաստափոխական դրսկրում գրեթե չի նշանարվում: Որպես վերջինների օրինակ ՅԼԴԲ-ի հեղինակները բերում են՝ **լինել, թե չլինել, կենդանի դիակ, պատեճավոր մարդ** և այլն: Մենք աշխատել ենք ըստ հնարավորին ներկայացնել այնպիսի միավորներ և հարադիր բայեր, որոնցում, այնուամենայնիվ, իմաստափոխությունն առկա է: Այս հարցում առաջնորդվում ենք ընդունված հիմնական սկզբունքով. «Դարձվածքային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում և հանդես գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»<sup>7</sup>: Ներկայացված դարձվածային միավորներն ըստ հնարավորին մտնում են տրված բնութագրման մեջ:

Պետք է նշել, որ որոշակի դժվարության ենք հանդիպել՝ արդի հայերների դարձվածային միավորների իմաստից օտարվելու, 16-18-րդ դարերի լեզվամտածողությանը հաճապատասխանող ԴՍ-ներ ընտրելու հարցում: Օրինակ, դժվար է ասել՝ հետևյալ միավորներն իրենց ժամանակին դարձվածքը են եղել, թե՝ սովորական բառակապակցություններ կամ հարադրություններ. **մատ գիր** (ստորագրություն), **յեղ մնալ** (ուշանալ, հապաղել),

<sup>6</sup> Տես, օրինակ՝ **Պ. Բեդիրյան**, Ժամանակակից հայերենի դարձվածքաբանություն, Եր., 1973, **Խ. Բարիկյան**, Բայական դարձվածային միավորների կառուցվածքային տիպերը, ՊԲՀ, 1986, 1, էջ 144-156:

<sup>7</sup> **Ալ. Սարգսյան**, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 198:

**յիմն գծել** (հիմնարկել): Վաղ աշխարհաբարյան լեզվամտածողությունը մեզանից հեռացած լինելու պատճառով դժվար է պարզել նաև **սեւն գրել** («անունն այն ի սև գրեսցի»), **գտակ կորստեան**, **գլուխ քաշել** դարձվածքների ճիշտ իմաստները: Յուրաքանչյուր ընտրված ԴՄ, որ ներկայացված է բառաշարքում, կարծում եմ իմաստափոխության որոշակի դրսնորում ունի, միավորները տվյալ կապակցության մեջ անտրոհելի են, պատկերավոր մտածողության տարր են պարունակում, իսկ նշված հատկանիշները դարձվածքների հիմնական բնութագրիչներն են:

Անշուշտ նկատելի է, որ ներկայացված որոշ ԴՄ-ներ ծանոթ են և կիրառվում են հայերենի այլ փուլերում ևս, այդ թվում՝ արդի հայերենում: Վաղաշխարհաբարյան որոշ դարձվածքներ իմաստով ու կազմությամբ ամբողջությամբ համընկնում են արդի հայերենի համարժեքի հետ, ինչպես՝ **աւելորդ անուն, բան անել, բերնով ասել, բարով վայելես, գլխի ծարը տեսնել, դարդ քաշել, խռով կենալ** և այլն: Որոշ դարձվածքներ չնշին տարբերություններ են դրսնորում, օրինակ՝ վաղ աշխարհաբարում **այգի ծգել-ներկայունս՝ այգի գցել, աչացս լոյս - աչքի լույս, բարեաւ վայելումն - բարի վայելում, բարձի թողով - բարձիթողի անել** և այլն:

Իսկ մի քանիսի դեպքում գործ ունենք իմաստափոխության հետ, որոնք կարող են պատճական դարձվածքաբանության ուսումնասիրման նյութ դառնալ, օրինակ՝

**գլուխ քաշել** վաղ աշխարհաբարում նշանակում էր «ձեռնարկել», ՀԼԴԲ-ում ունի «մտահոգվել, հոգ տանել» իմաստը,

**ձեռք տալ** – վաղ աշխ.: «ձեռնարկել», ՀԼԴԲ-ում՝ «1. ձեռքով դիպչել, 2. շահավետ լինել»,

**մատ դնել** – վաղ աշխ.: «ստորագրել», ՀԼԴԲ-ում ունի «մատնացույց անել, մի բան հավանել» իմաստները,

**մեկ բերան** – վաղ աշխ.: «գոնե մեկ անգամ», ՀԼԴԲ՝ «անընդհատ, միալար» և այլն:

Նշված միավորները վաղաշխարհաբարյան համարելու և դարձվածքների շարքը մուտքելու մեր նպատակը հստակ է. ցանկացել ենք մատնանշել դրանց ծագումը կամ գործածության հնությունը՝ հայերենի ԴՄ-ների պատմական զարգացման ընթացքն ուրվագծելու նպատակով: Օրինակ՝ հետգրաբարյան կամ հետմիջնինհայերենյան (16-18-րդ դդ.) շրջանում են ծագել կամ առնվազն գրի առնվել և ապա համագործածական դարձել այնպիսի միավորներ, ինչպիսիք են **հոգուց հանել, տղայ մարդ, խելքը թոշնել, հազար բերան, տարին տասներկու ամիս, պատկեր քաշել, վազ գալ** և այլ հանրահայտ դարձվածային միավորները:

\* \* \*

Ստորև ներկայացնում ենք բազմաթիվ բնագրերից մեր քաղած դարձվածային միավորները՝ ըստ հնարավորին բացատրություններով, նաև բնագրային վկայակոչումներով: Որոշ դեպքերում դարձվածային միավորը ներկայացրել ենք ոչ թե ուղիղ, այլ թեքված ձևով, ինչպես՝ **դղօրդ էառ, բարով մնայ, յիշատակն կտրայ, վայ եկաւ** և այլն, դրանք առավելապես կիրառվում են նման ձևերով, և անհավաստի կլիներ ուղիղ ձևը ներկայացնելը:

Բնագրերի համառոտագրումները տրվում են հրապարակման վերջում:

ԱՄԲՐ ՀԱՆԵԼ - որոշում ընդունել: Սուլթան Մահամադ թագաւորէն **ամբր հանեց**, թէ Էջմիածնայ թէ մէռոն, թէ նվիրակ, թէ սեւայզլուխ չի գան Ալի-Օսմանայ երկիրն (Զ. Ագուլ., 66):

ԱՅԳԻ ԶԳԵԼ - այդի հիմնել՝ տնկել: Մեք՝ Ղարախանի որդիքս ճանճանց շինեցինք, տնկի ու **այգի ծգեցինք** (Յիշ. Սանահն., 140):

ԱԾՈՒ ԿՏՐԵԼ - անվանարկել: Նորագոյն չար ոմն ... Յոհան վարդապետ, սա եղև պատճառ քո **անուն կտրելոյ** (Դիւան Ս. Յակոբայ, 1940, 282):

ԱՉԱՑ ԼՈՅՍ - աչքի լույս, սիրելի: Իմ **աչա՛ց լոյս**, ինծի գուլում արիր, այսչափ ժամանակ է զիմ ըստակն պահեցիր (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 40): Չեր մեծաւոր և առաջնորդ, **աչացս լոյս** Աղեքսանդր վարդապետն է, որ հոգայ զոտունդ և զքաղաքդ (Դիւան Ն. Զուղայի, 98):

ԱՊՈՒԾ ՄՆԱԼ - ապշել: Պերծ բանիւ եւ խրոխտ ձայնիւ համարձակ ընթեռնուին, առ որ հիացեալ՝ զարմացեալ **ապուշ մնային** ամենայն ժողովք հանդիսին (Դաւրիժ., 490): Ամենեքեան սոսկացեալք զարմացեալք **ապուշ մնային** (Դաւրիժ., 410): Նորա տեսեալ՝ զարմացաւ և **ապուշ մնաց** (Ա. Տիգր., 319):

ԱՌՈՒԱՐԵԱՆ ՄԵՐԶԱՒՈՐ / ԱՐԵԱՆ ՄԵՐԶԱՒՈՐ - արյունակից, մերձավոր: Աստուած ողորմի ասացեք մահիասի խօճայ Սահակին ... և այլ ամենայն **առուարեան մերձաւորացն** (Ակոր., 198): Օրինեալ ձայնին արժանի եղէն ... և զամենայն **արեան մերձաւորքն** զկենդանիքն և զիանգուցեալքն ամէն (Դիւան, Ժ, 27):

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐԻՆ ԱԶՈՂԻ - Աստված բարի ընթացք տա: Նաւն էր ֆէլամիկ, անուն նաւին Սարգանդ Լիոնը: **Աստուած բարին աջողի** (Զ. Ագուլ., 51):

ԱՎԱՏԱԼԻՔ ԱՆԵԼ - հավատացնել, վստահեցնել: Ետ այնորիկ Տեր Խաչատուրն **ավատալիք արավ՝** կրկնապատիք Փսվեր հողն Աղունկա ծօվի հողն բաղալ արինք (Յիշ. Սանահն., 173):

ԱՐԿԱԹ ԶԳԵԼ/ԳԶԵԼ - խարիսխ գցել (տես նաև ԵՐԿԱԹ ԱՌՈՒԾ): Յամի ՌԵԹ յունվարի մէկումն նաւն Եկին Խսպանիայ, ի քաղաքն Կալիս **արկաթ գձեցինք** (Զ. Ագուլ., 55): Այսօր Եկինք Իզմիր, **արկաթ գձեցինք**, դուրս Ելանք ցամաք (Զ. Ագուլ., 55):

ԱԻԵԼ ԱԾՈՒ/ ԱՒԵԼՈՐԴ ԱԾՈՒ - հավելյալ անուն՝ մականուն, հաճախ նաև՝ ազգանուն: Այս է տապան հանկստենի Մահտեսի տէր Յայրապետի, սա է գեղճէն Կալերցի, **աւել անուն** սա Տաստչի (Դիւան, Ա, 140): Երեւանայ Սէֆիդուլի խանիցն ղաջար Յուսէնիսան թէկն Ագուլիս այսօր դուրուղայ Եկաւ ժ ծիաւորաւ, **ավել անունն** որ կոչի Թարխան (Զ. Ագուլ., 70): Սկսեցին այնպէս ձայնել Յեահիյեայ, այս իմ **աւելորդ անունս** անկից մնաց (Ե. Մուշ., 130):

ԲԱԶՄԱԿԱՆ ՈՒԶԵԼ - հարկ պահանջել, բազմական՝ «խնջույքների, հավաքույթների համար տրվելիք հարկ»: Միաբանքս մեզ հենց **գիր տվին**, որ մեզանէ էլ բազմական չուզեն (Յիշ. Սանահն., 136):

ԲԱՆ ԱՆԵԼ - աշխատել: Աքուլաց ու Դաշտէն հգ մարդ տարաւ Երեւան,

որ բերթի վերայ **բան անէն** (Զ. Ագուլ., 143):

ԲԱՍՍԱՅ ՏԱԼ, ԲԱՍՍՈՎ ՀԱՆԵԼ - տպագրել, թուրք ხամա «տպածո» բառից: Ոսկան վարդապետն... այժմուս գնացել էր վասն գրքեր **բասմայ տալու**, որ այս ժ ան է Ֆռնգուտան է (Զ. Ագուլ., 108): Աստուածաշունչն այս Ոսկան վարդապետս **հանեց բասմով**, շատ շատ գրգէր հանեց (Զ. Ագուլ., 108):

ԲԱՐՁԻ ԹՈՂՈՒԼ - բարձիթողի անել: Լուսոյ ստեղծիչ ես դու / Մի՛ **բարձի թողուր** զիս ի քէն (ՈՒՄՐԲ, II, 221):

ԲԵՐՍՈՎ ԱՍԵԼ - բերանացի ասել, անձամբ հաղորդել: Յրաման տվինք քէֆիսայ չէլէրուն, որ **բերնով ասես** (Էզօ, 430):

ԳԱԼ ՕՐ - հաջորդ օրը: Ես՝ Զաքարիայ, այսօր զատիկ Գումեռումն արարի, որ **գալ օրն** կու գինք Աֆիան Ղարայիսարն Աստուծով (Զ. Ագուլ., 61):

Գին ՈՒ ԾԱԽ ԱՆԵԼ - սակարկել, գինը համաձայնեցնել: **Գին ու ծախսարի** իմ հար (հայր) Մուղտուսու առած արտն ջաղացանու (Կալվածագր., 65): **Գին ու ծախսարինք**, վերստին չվանն ե՛՛ դիան (Կալվածագր., 66):

Գին ՏԱԼ - վճարել, համարժեքը տալ: Քարատակի այգին ... իւր բրհարովն առանք ու **գին տվինք** Ղարպասի սինուռումն Գ հող՝ Մարգարի բարձիողն (Յիշ. Սանահն., 142):

Գիր ՈՒԽՏԻ - դաշնագիր: Այս **գիր ուխտի** հաստատութեան եղև ի քաղաք Ալապ ... ի մէջ հոգետան (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 127):

Գիր ՏԱԼ - ստորագրել՝ համաձայնություն տալ: Միաբանք մեզ հէնց **գիր տվինք**, որ մեզանէ էլ բազմական չուզեն (Յիշ. Սանահն., 136): Ես՝ Մարկու էրտս Ծոփօցի **գիր տվինք** Սանահնու Սուրբ Աստուածածնի դռանն Ղուկաս Եպիսկոպոսի առաջնորդութենովն (Յիշ. Սանահն., 139):

ԳԼԽԻ ԾԱՐ ՏԵՍՍՈՒԼ - փրկության միջոց գտնել: Գրէք, որ մեր **գլխի ծար տեսսումք**, զիրա սիրաթից դուրս եկանք (Էզօ, 418):

ԳԼՈՒԽ ՔԱՇԵԼ - գլուխ բարձրացնել՝ ծառանալ: Թուին ԶՇԶ Տօրիլոյ հոռոնքն **գլուխ քաշեցին**, եւ Յուսէյն վաշայն ի վերայ գնաց զիռոռոնքն ջարդեաց եւ գերեաց (Դարիթ., 474): Թվին ՈԼԹ քուրթն **գլուխ քաշեց եկալ յեզնկան** (Մանր Ժամ., II, 268):

ԳՆԱԼ ՈՒ ԳԱԼ - երթուղարձ անել: Ես Զաքարէս **գնալ ու գալն** մին ամիս քաշեց (Զ. Ագուլ., 104):

ԳՈՐ ՏԱԼ - գոհություն տալ, օրինել: Նա **գոր տալով** օրիներ զթիստոս արքայն (ՈՒՄՐԲ, II, 4):

ԳՏԱԿ ԿՈՐՍՏԵԱՆ - կորուստ գտնող՝ նյութող: **Գտակ կորստեան** և առիբն ամենայն չարեաց բազմահնար մեքենայիւք մարտ եղեալ ոգորէր առ սուրբ տեղիսն (Դիւան Ս. Յակ., 1941, 157):

ԳՐԳԵՐ ՀԱՆԵԼ - գրքեր տպագրել, ստեղծել: Այս Ոսկան վարդապետս ... շատ շատ **գրգէր հանեց** (Զ. Ագուլ., 108):

ԴԱՏ ՔԱՇԵԼ - դատի տալ: Միշտ զնիկոլն **դատ քաշէիր** / Եւ հազար գէշ նմա ասէիր (ՈՒՄՐԲ, II, 66):

ԴԱՐԴ ՔԱՇԵԼ - դարդ անել, վշտանալ: Սիրոյդ քարդանն մտեր ես / **Դարդ քաշելով** մաշեր ես (ՈՒՄՐԲ, II, 359):

ԴԱՒԻ ԱՆԵԼ - վիճել, դատ անել: Ես՝ Միտիչի որդի Ամիրս, Յասարակաց իգու դիմաց ճաղակին **դաւի արի**, թէ իմ հողի տակին այ (Յիշ. Սա-

նահն., 138):

ԴՂԸՐԴԻ ԷԱՌ - դղըրդաց, դղըրդոց պատեց: Սուրբ Յովիաննու ծայնն որ լսեց, դժիխքն ամէն **դղըրդի էառ** (ՈՒՄՅԲ, I, 66):

ԴՈՒՄ ԳԱԼ - ի հայտ գալ, մեջտեղ գալ: Երուսաղեմայ Եղիազար ոնն վարդապետ **դուս եկաւ**, եկաւ Ըստամբօլ, Սուլթան Մահամադ թագաւորէն ամբը հանեց, թէ Եջմիածնայ թէ մէռոն, թէ նվիրակ, թէ սեվայօլուխ չի գան Ալի-Օսմանայ երկիրն (Զ. Ագուլ., 66):

ԴՕՎՈՒԼ ՉՈՒՆԱՅՅ - դիուլ - զուռնա, երգ - երաժշտություն: Զրաւրինիք Ագուլիս արարի: Գետումն ջուր ալրինեցին **դովուլ զռնով** (Զ. Ագուլ., 74):

ԵՍՈՐ ՎԱՐՆ ԳՉԵԼ - հետաձգել, ուշացնել: Այս Շմաւոնս **եսօր վաղն գձելով՝** այս պարտքս մնայ (Զ. Ագուլ., 99):

ԵՐԱԾ ՔԱՐՓԻՉ - թրծած ասյուս: Կրոլաց սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապէտն ... մաղայզէք շինեց, ոմն կիր ու քարով գումբէզի, ոմն **երած քարփիչ** ու գաջով գումբէզիք (Զ. Ագուլ., 78): **երած քարփիչով** գլուխն փոշիշն արարին (Զ. Ագուլ., 97):

ԵՐԱՍ ԿԱՊԵԼ - խունք կազմել: **երամ կապես** հետ հարսներուն / ճեմես ի հետ աղջիկներուն (ՈՒՄՅԲ, II, 332):

ԵՐԿԱԹ ԱՌՆՈՒԼ - խարիսխը քաշել՝ բարձրացնել (հմնտ. ԱՐԿԱԹ ԶԳԵԼ): Իսկ նաւավարքն յունաց ազգին / Յետ այնորիկ **զերկաթն առին** (ՈՒՄՅԲ, II, 561):

ԵՕԹԸ ՊՈՐԸ - բոլոր նախնիները, յոթ սերունդ: Մեր **եօթը պօրտի** մեղացն տէրը լիցին դատաստամին (Կալվածագր., 25):

ԹՈՒՂԹ ՈՒ ԳԻՐ ԱՆԵԼ - համաձայնության գալ, ուխտի գիր ստորագրել: Յետ մէկի **թուղթ գիր արին** / Որ յետ շաբթու մի օրհնէին (ՈՒՄՅԲ, II, 97):

ԹՈՒՐ ՔԱԾԵԼ - սուրը վոր բերել՝ հարվածել, պատրաստվել հարվածելու: Ներկեաց զինքն չարախօսութեամբ, և մուրթաք (իմա՝ ուրացող - Ն. Պ.) Սարգիս աբեղայն **թուր կու քաշէ** վերայս (Դիւան Ս. Յակոբայ, 1940, 284): Դարձաւ սուլթան իւր զօրօքն եւ **թուր քաշեց**, այնպէս պատերազմեցաւ յերկիր սասանեցաւ (Մանր Ժամ., I, 225):

ԹՈՓ ԵՒ ԹՖԱՆԿ / ԹՈՒԱՆԿ - թնդանոր և հրացան, փիսք՝ զենք-զինամթերք: Կրիցեն զզարիուրեցուցիչ զէնսն, որ **թոփ եւ թֆանկը** կոչեն (Յ. Կամենացի, 42): Սկսան հարկանել ի հրաբորքը **թոփից եւ ի թֆանկիցն** մինչեւ ցիրիկունն (Յ. Կամենացի, 50): Քանի մարդ մեռաւ սրով և թրով, **թոփով և թուանկով** (Դիւան, Ժ, 26):

ԹՈՓ ԿՊՈՅՅ - ռունք արձակեց: ԺԵ օրն, ՈՇԳ. **թոփ կպոյց**, երեք դիհաց փլոյց զբերդի պարիսպն (Դաւրիժ., 482):

ԹՈՓ ԶԳԵԼ - թնդանորով կրակել: Սինան աղայս՝ որ Ենկիչար աղասի էր, ի վերին բերդէն սկսաւ **թոփ ձգել** ի վերայ ապարանից փաշային (Դաւրիժ., 383): Ծովէն յանկարծ **թոփ ձգեցին** / Յահէ ձայնոյն սարսափեցին (ՈՒՄՅԲ, II, 557):

ԹՖԱՆՔ ԶԳԵԼ - հրացանով կրակել: Եւ Եկեալ մերձ բերդին Նախչուանու բանակ Եղեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ **թֆանք ձգեին** հասանէր (Դաւրիժ., 67): Մի՛ **ձգեք թֆանք** կամ նետ, զի ես սակաւ արամբք զամ առ ձեզ խօսել ընդ ձեզ բանս ինչ իրաւամբ (Դաւրիժ., 67):

ԻՍԿ ԲԱՆԻՑ - խոսքի խկությունը, էությունը: Յրամայեաց նոցա զնալ

մինչ ի Զուրայ տեսանել եւ իմանալ **զիսկն բանից** եւ բերել նմա համբաւ ճշմարիտ (Դաւրիժ., 88):

Ի ՎԱՂՆ ԶԳԵԼ - հետաձգել, ձգձգել: Զայս օուր դատաստան **ի վաղըն ոչձգեն** (Յ. Թուրունջ., 303): Դատաստանագիրքն առաջևներն այս օրէն դատաստանն **վաղն չեն ձգել** (Յ. Թուրունջ., 308):

ԻՒՐ ԳԼԽՈՒ - ինքնազլուիլ: Ազարէն գնայ, Բ իրիցի **իւր գլխու** պսակել կուտայ, տանէ (Զ. Ազուլ., 78):

ԽԱԲ ՏՍԼ - խաբել, մոլորեցնել: Օսմանցիք սաֆար արին ծովով եւ համբաւեցին թէ գնամք ի վերայ Մալթայ կողմույն եւ **խաբ տուեալ** գնացին ի վերայ Կրիտէ կղզւոյն (Դաւրիժ., 485):

ԽԱԹԵՐ ՀԱՄԵՐ/ԽԱԹՐԻՆ ՀԱՄԱՐ - ի պատիվ, ի սեր: Լինի Աստուծոյ **խաթրին համար** (Յզօն, 155): Կասն Աստուծոյ **խաթրին համար** կու կատարիմք (Յզօն, 156): Էլշին մեր **խաթրին համար** վիզ էկալ հետ տանելոյ (Նշխարք, 8): **Իմ խաթրեր** համար քո մեղքն թողվին (ՈՒՄՔ, II, 434):

ԽԱՊԱՐԻ ՆԱՅԵԼ - լուրի սպասել: Մեր աչքն ի ճանապարհին է, **խապարի կու նայինք** (Դիւան Ս. Յակոբայ, 1940, 203):

ԽԵԼՔԸ ԹՈՑՆԵԼ - այստեղ՝ հիանալ, տարվել: Երբ որ զքեզ այդպէս տեսայ / քակացայ, **զիսելքս թռուցի** (ՈՒՄՔ, I, 80):

ԽԵՒ ԳԱԼ - խելքը թռցնել: Զծոցդ ես բացեր գետ դրախտի դուռ / Զին խելքս տարիիր, **խեւ կու գամ** ի ժուռ (ՈՒՄՔ, I, 119):

ԽԵՐԻ ՏԵՍՆԵԼ - օգուտ ստանալ: Գալուստ վարդապէտն էառ, զոր բարեաւ և ուրախութեամբ վայելեսցէ և **խերն տեսնու** (Կալվածագր., 94):

ԽՌՈՎԱՆՔՆ ԸՆԿՆԵԼ - խռովքին՝ նզովքին արժանանալ: Ով որ այս բանիս հակառակի, Աստուածածնի **խռովանքն ընկնի** (Յիշ. Սանահն., 143):

ԽՌՈՎԿ ԿԵՆԱԼ - խռովքլ: Ով էս բանիս թախսիրութիւմ<sup>8</sup> անէ կամ այլ և այլ անէ, Աստուածածին իրանն և իր որդանցն **խռով կենայ** (Յիշ. Սանահն., 170):

ԽՕՍՔ ԲԵՐԵԼ - լուր բերել՝ հայտնել: Յաշքարխանու մեր մարդն եկին, մեզ **խօսք բերին** (Յզօն, 258):

ԽՕՍՔՆ ՓՈՒՉ ԼԻՆԻ - խսքը անտեսվի: Թէ մեր ազգէն դաւի անօղ լինի, **խօսքն փուչ լինի** (Կալվածագր., 87):

ԿԱՆԱՉ ԳԼՈՒԽ - կանաչ գլխանոց կրող՝ մահմեդական մի աղանդի ներկայացուցիչ: Նոր դատին յունիսի մթ ենուտ ի քաղաքս, **կանաչ գլուխ** է և շինտիլիկ աղլէկ մարդ կ'երևայ (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 84):

ԿԱՐԵՑՆ ԱՆԵԼ - կարիքը հոգալ: Մեր խմհատն ... ծախէցինք իւր չորս կոպարովն, հախն առանք, մեր **կարէցն արարինք** (Յիշ. Սանահն., 135): Ծախեցի Փոխոտաց տուն ու մառան ... հախն առայ, իմ **կարէցն արի** (Յիշ. Սանահն., 160):

ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿ - կարմիր գլխարկ կրող՝ պարսիկ. 1505 թ. մի Յայսմաւուրքի մեջ ասվում է՝ «... ի դանութիւն ղըզըլպաշին, որ կարմիր գտակ կոչի»: Ի սորա ժամանակն եւ ի սոյն ամին **կարմիր գդակներն**, որք են Ղըզըլպաշներն, առին զբաղդատ (Դաւրիժ., 432): Զբոլորն խանդակ արարին ի յահէ **կարմիր գտակին** և եղին անդ երեք փաշայ երեք հազար ա-

<sup>8</sup> Պարսկ. τοχς «խարդաւանք, չարութիւն» բառից:

րամբք (Դիւան, Ժ, 36): Եւ սոյն ամի կարմիր գտակներն, այսինքն Ղըզըլպաշն, էառ զԲաղդատ (Մանր ժամ., Ա, 395):

ԿԱՐՍԻՐ ԳԼՈՒԽ - կարմիր գլխանոց կրող՝ պարսիկ: Պաշարեաց զքաղաքն և զբերդն, և ի յուժ ձգել կարմիր գլխին թողին զքաղաքն և ամրացան ի բերդն (Դիւան, Ժ, 24): Սուլտան Սուլայմանն բազում զաւրաւք գնաց ի վերայ կարմիր գլխուն (Նշխարք, 42):

ԿԱՐՍԻՐ ՌՈՒԿԻ - օսմանյան ուսկերդամի անվանումը: Կաշառս ետուն Վանայ փաշային ութ հարիւր կարմիր ոսկի ծեռամբ Աղթամարայ աղին (Դիւան, Ժ, 54):

ԿԵՏ ԿՈՉՄԱՍ - կոչման՝ դատաստանի պահը, ցմահ: Յաստատուն պահեսցէ մինչև ի կետ կոչման մերում, յաներկրայ ստօր և առանց ամօթու կատարել յանգ ծառայութեան մերում (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 201):

ԿԻՍՈՒ ԿԾՐԵԼ - պարտքի կեսը զեղչել: Մարդ ընգաւ մէջ, որ բերին, կիսու կտրեցին. գիր տվին, թէ չուրի ժը ամիս կիսու կտրածն տանք (Զ. Ագուլ., 72): Դարցեալ այս կիսու կտրածն այլ տվին ոչ (Զ. Ագուլ., 73):

ԿՈՏՈՒՐ ԸՆԿՆԵԼ - կոտր ընկնել, արժեզրկվել: Այս չուխէս գնայ Խորմաց երկիրն (իմա՞ Ղրիմ - Ն. Պ.), մեր չուխէն կոտուր կու ընկնի (Զ. Ագուլ., 131):

ԿՐԱԿ ՏԱԼ - այրել, կրակի մատնել: Տեսաք ամենայն ապրանքն թալանած, շատ տուն և վանք կրակ տուած երած, դապն դատարկ ժողովուրդն մնացին Աստուծոյն փառք տալով (Նշխարք, 8):

ՀԱԶԱՐ ԲԵՐԱՍ - բազմաթիվ անգամ: Վայ եւ եղուկ հազար բերան / Ազգիս Յայոց, որ ի Լով կան (ՈՒՄՃԲ, Ա, 112):

ՀԱԼ ԶԻ ՄՆԱՑ - հնար՝ ճար չմնաց: Դատաւորէն ևս խոյս ետուր, գիրա կենալու հալ չի մնաց ի տեսու (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 202):

ՀԱՄԱՐ ԶՈՒՆԻ - հաշիվ չունի, անհամար: Ավազին համարք ունի, սորայ ջառված մարդին համար չունի (Զ. Ագուլ., 32):

ՀԱՄԱՐ ՏԱԼՈԳ - հաշիվ տալ: Նոքա տքնին վասն հոգլոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր առաջի Քրիստոսի (Կալվածագր., 167): Գրգռեն զԱստուած ընդ մեզ բարկանալոյ / Եթէ ներես, նայ դու ունիս համար տալոյ (ՈՒՄՃԲ Ա, 648):

ՀԱՄԲԱՐ ԱՍԵԼ - ընթերցել, դիտարկել: Ետարի կարդացի Ը կանում սաղմոսն, այլ բազում գրանք համբար արի (Նշխարք, 5):

ՀԵԾԵԼ ՔԱԾԵԼ - հեծյալներին՝ այրուծիուն մարտի հանել, ասպատակել: Մահմուտ աղան հեծել քաշեց եւ վրան գնաց եւ նա հեծելն չարդեց, Մահմուտ աղան ճորով ազատեցաւ (Մանր ժամ., Ա, 213):

ՀՈԳՈՒՄ ՀՈԳԻ - սիրելի, հոգյակ: Դարձեալ իմ հոգուս հոգի, երբոր զիս քո չար պատահման դէմ ես դրեր, ինչու՝ համար զիմ ըստակն չես դրկեր (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 40):

ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ - հոգու բաժինը, եկեղեցուն տրվող տուրքի տեսակ: Զեր անթերի պտուղն, սրբայրամն, անկարծամահին հոգոյ բաժին տվէք Տէր Բարսեղ արհեապիսկոպոսին (Յիշ. Սանահն., 84):

ՀՈԳՈՅ ՏՈՒՆ - հոգու՝ հոգևոր տուն: Զեր Աթոռին խնայեցէք, որ ձեր հոգոյ տուն է (Դիւան Ն. Զուղայի, 104):

ՀՈՇՍԻ ՀԱՒԱՏ - կաթոլիկություն: Զարեղաներն և զերեցնին զբլեղներն ածիլեցին, հոռմի հաւատ մկրտեցին (Նշխարք, 54):

ՐՈԱՄԱՆՔԸ ԲՈՆԵԼ - հրամանը կատարել, հրամանին հետևել: Հոգևոր տէրն իմացաւ, մեզ վերայ օրինութեան թունստ դրկեց. հոգևոր տիրոջ **հրամանքն բռնեցինք** (Յիշ. Սանահն., 143):

ԶԵՌԱՑ ԳԻՐ - ստորագրություն: Ուղիղ սրտիւ դրինք զնօհրն և **զՃԵ-ՌԱՑ ԳԻՐՆ** մեր այս թղթիս (ԷՅՋ, 19): Դրի իմ մօհրն **ՃԵՌԱՑ ԳԻՐ** ինձ դապուլ այ (ԷՅՋ, 20):

ԶԵՌԱՑ ԽԱՉ - ծեսերի ժամանակ գործածվող հոգևորականի ձեռքի խաչ: Տէր Խարայէլն և իւր որդի Յակոբն տվին մէկ խալիչայ, մէկ լաւ փոքր **ՃԵՌԱՑ ԽԱՉ** (Ակոր., 205): Մահեասի Աւետիքն և Գիգորն ետուն Ա արծաթէ **ՃԵՌԱՑ ԽԱՉ** (Ակոր., 211):

ԶԵՌԱՑ ՏՎԱՐ - ծեռնարկել, սկսել: Ագուլիս Ներքի թաղի սուրբ Ովանէս անվան եկեղեցին այսօր **ՃԵՌԱՑ ՏՎԵՑԻՆ**, վեր կալան, որ շինեն (Զ. Ագուլ., 63): Տէր տներն **ՃԵՌԱՑ ՏՎԻՔ** շինելու, Ալեքսան էլ **ՃԵՌԱՑ ՏՎԵՑ**, ինքն էլ շինեց (Զ. Ագուլ., 90):

ՄԱՅՐՈՒ ԴՈՒՌՆ ՅԱՍՆԵԼ - մահվան վտանգի ենթարկվել: **Մահու դուռն հասի** և կենդանացայ, լիցի թէ աղօթիւք ձեր ապրեցայց ժամանակս ինչ (Ղիւան Ն. Զուղայի, 76):

ՄԱՅՐ ԼՈՒՍՈՅ - այդպէս է անվանվել Մայր առող Ս. Եջմիածինը: Յորմէ ժամանեսց ողջոյն ի վերայ հոգևորապէս սիրեցեալ զաւակիդ **Մօրս Լուսոյ** շքեղաշուր և ճոխափառ խօճայ Յակոբքանիդ (Ղիւան Ն. Զուղայի, 47): Դարձեալ ծանիր, լուսածնունդ զաւակ **Մօրս Լուսոյ** Սուրբ Եջմիածնի (Ղիւան Ն. Զուղայի, 61): Յօժարեցան ի շինումն և ի նորոգումն **Մօրմ Լուսոյ** քրիստոսադիր սուրբ Աքոռոյն Եջմիածնի (Ղիւան, Ժ, 47):

ՄԱՍՉ ԺՈՂՈՎԵԼ - մանրաժողովը Օսմանյան կայսրությունում (տես նաև ՏՊԱՅ ԺՈՂՈՎԵԼ): Դարձեալ ի նոյն թուին սուլթան Սէլիմն արար **զմանչ ժողովելն** (Դաւրիժ., 474): Դարձեալ ի սոյն թուին **մանչ ժողովողն** ել (Դաւրիժ., 480):

ՄԱՏ ԳԻՐ - ստորագրություն, մատնադրոշ՝ որպէս ստորագրություն: Միթէ՝ Մեսրոպ վարդապետի **մատ մի գիրն** քան զմեր հրամանն այլ բարձր այ (Ղիւան Ն. Զուղայի, 87):

ՄԱՏ ՂՆԵԼ / ԿՈԽԵԼ - ստորագրել, արձանագրել: Ես՝ Զլատի որդի Պիլիպոս **մատս դրի**, ինձ դապուլ է (Կալվածագր., 79): Ես՝ Գրիգորս մոհրն չունի, **մատս դրի** և ինձ դապուլ է (Կալվածագր., 146): Մովսէսի կողակից Մարիամն վասիի գոլով իմ կողմենէս և իմ եթիմ Գևորքիս կողմանէ **մատս կոխեցի** (Կալվածագր., 152):

ՄԵԾ ՄԱՄ, ՄԵԾ ՊԱՊ - տատ, պապ: Այս տներս որ վերստին շինեցի, թէպէտ փոքր, ապայ գիտեմք թէ գրոց, թէ բրոց, թէ **մեծ մամիս**, որ էր Բանաւշայ, հարցանելով իմացայ (Զ. Ագուլ., 91): Յիշատակ ... **մեծ պապուն** Կարապետի և **մեծ մամուն** Կիւլչէկին (Աղաւն., 31):

ՄԻ ԴԵՅ ԱՆԵԼ - համաձայնության գալ, դեհ՝ բրբ. «կողմ»: Ով խաւսք ունենայ, մեզ հետ խաւսի, Աստուծոյ վկայութեամբ տվինք **մի դեյ արարինք** (Յիշ. Սանահն., 143): **Մի դեյ արինք**, սինուռ դրինք աղբիւրն և իւր ներքի թումբն (Յիշ. Սանահն., 147):

ՄԻՆ ԱՉՔԵ - մեկ կամար ունեցող, միաթռիչք (կամուրջ): Աստի մինչի ջվլիգի **մին աչկէ** կարմունջն՝ աղաջ Բ (Զ. Ագուլ., 10): Աստի գնայ Ղուշաղի տակի **մին աչկէ** կարմունջն՝ աղաջ Գ (Զ. Ագուլ., 10): Գործածվում է նաև

այլ թվականների հարադրությամբ, ինչպես՝ հինգ աչկէ. Տուխուրդանու մինչի կշտի մեծ գետն, **Ե աչկէ** կարմունջն՝ կես աղաջ (Զ. Ագուլ., 25):

ՄԵԿ/ՄԻՆ ԲԵՐԱԸ - մեկ անգամ, նաև՝ միաբերան, միասին: Օվ հանդիպող գերեզմանի, **մին բերան** հարմեղ<sup>9</sup> ասի (Դիւան, II, 65): Որ կարդաք, **մեկ բերան** ողորմի ասէք (Դիւան, II, 241):

ՄԻՆ ԴԱՐՆԱԼ - միավորվել, միանալ: Ավան փաշէն, որ էր Ախլցիսու փաշէն, Շահնազար խանին յետ մին այ դառած (Զ. Ագուլ., 152):

ՄԻՆ ՄՆՈՒ ՊԱՍԱԼ ԼԻՆԵԼ - համարժեք լինել, փոխհատուցել: Այն է պատալն, որ Տէր Խաչա/տուր արելէն Կացոցկայ բիսին վեր հողն, որ տվել էր հոգեբաժին և **մին մնու պատալ յեղաւ** (Յիշ. Սանահն., 173):

ՄԻՒՍ ՎԱՐՆ - վաղը չէ մյուս օրը, հաջորդ օրվանից հետո: Զբաղելն ի վաղն ձգէին, եւ ի վաղուէն ի **միւս վաղն**՝ վասն բազում ծանծրութեանցն (Դաւրիժ., 460):

ՅԵԴ ՄՆԱԼ - հետ ընկնել, հապաղել: Ի ճանապարհն որ երթայինք, այն ինչ յեղ մնար՝ սպանէին (Նշխարք, 7):

ՅԻՄՆ ԶԳԵԼ / ԳՉԵԼ - հիմնարկել, հիմնարկեք կատարել: Յին եկեղեցին վեր կալան, **յիմն զՃԵցհին** քարով, կրով, Քուրդստանայ ուստայ բերին (Զ. Ագուլ., 96): Աքուլաց բազարումն յարաւայի կողմն մին քարվանսարայ **յիմն ծգեց**, դուգան, բազար շինէ (Զ. Ագուլ., 149):

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԴՊԻՐ - ընթերցող դպիր. **Յիշատակաց դպիր**. կոնտակ կարդացողն է (ՄՄ 1127, 147ա):

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԿՏՐԱՅ - հիշատակը մոռացվի: Ինչ մարդ էս բանիս միջումն այլեւայլ խօսք յետ եւ յառաջ բան ասայ ու կտրայ, Սուլք Կարապետն իւր յիշատական կտրայ (Զաք., Գ, 22):

ՅԻՐԱՐ ՏՍԼ - փոփոխել, տեղից շարժել: Այսմ հետէ ով դաւի անէ կամ այս բանս **յիրար տայ**, կամ զմեր յիշատակն Սուլք Աստուածածնի դրնէս խափանել ջանայ, աւձէն մինչև ի նեռն անիծած լիցի (Յիշ. Սանահն., 139):

ՅՈՏՔՆ ՃԱՆԵԼ - ավարտել: Թուին ՌԶ (1557) Կեղեցի Ռուկաս վարդապետն զումարն ի **յոտքն հանեց** (Սանր Ժամ., II, 393):

ՅՈՒԺ ԶԳԵԼ - նեղը գցել: Պաշարեաց զքաղաքն և զքերդն և ի **յուժ ծգել** կարմիր գլխին. թողին զքաղաքն և ամրացան ի բերդն (Դիւան, Ժ, 24):

ՇԱԼԵ ՇԱՊԻԿ - շալ կտրոց շապիկ, առհասարակ՝ շորեղեն: Մահդասի Մէլիքշահայ որդիքն՝ մահդասի Աւետիքն և Գիգորն ետուն Ա քիմխայ շուրջառ, Ա շալէ շապիկ (Ակոռու քյոր., 211):

ՇԱՍ ՃԱԼ - տանջանք: Ճենց որ հզմիրէն դուրս եկի, սելաւի ըռաստ եկինք: **Շան հալ** քաշեցի (Զ. Ագուլ., 45):

ՇԱՐԾ ԳԱԼ - շարժ երկրաշարժ լինել: Թվին Ռճժէ յունվարի Դ-ումն Ագուլիս կամաց **շարշ եկաւ** (Զ. Ագուլ., 74): Աստուածածնուն պասէն յենց **շարշ եկաւ**, որ շատ մարդ այ մեռէլ, շատ ավերութիւն էլէլ այս քաղաքներումն (Զ. Ագուլ., 76):

ՈՂՈՂԻ ՏԱՆԵԼ - ջրհեղեղի ենթարկվել, քշել-տանել: Սելաւի ըռաստ եկինք: Աստուած զմեզ փրկեաց **ողողի տանելու** (Զ. Ագուլ., 45):

ՈՏՆ ԱՌՈՒՔ ԼԻՆԵԼ - ոտք գցել՝ խանգարել, խոչընդոտել: Նոքա ընդ միմեանս միաբանելով կու ջանան, թէ Սուլք Տանս զարար հասուցանեն,

<sup>9</sup> «Յայր մեր» արտահայտության ժողովրդական յուրօրինակ ձևն է:

մեզ **ոտն առուրք լինելով** (Դիւան Ն. Զուղայի, 91):

ՉՄԱՐԴԻ ՈՒՆԵԼ - մարդու տեղ՝ բանի տեղ չդնել: Այսու պատճառաւ առաւել եւս զօրացան ներհակըն ի վերայ Նիկոլին եւ ի չմարդի ունէին (Դաւրիժ., 296): Եթէ խորհրդակիցք, եւ եթէ սպասաւորք, ի չմարդի կալեալ զԴաւիթ, արհամարհանօք ունէին զնա (Դաւրիժ., 299):

ՊԱՍՍԱՅ ԳԻՐ - տպագիր (թուրք. բասմայ «տպագրված գիրք» բառից): Այս ծեռագրիս օրինակն Փափն գրել է **պասմայ գրով** եւ յուղարկել է ի Լեհ (Թորոս աղբար, 289):

ՊԱՏԿԵՐԻ ԿԵՐՊԸ ՔԱԾԵԼ - պատկերը քաշել՝ նկարել: Տարան զիս ի սարայն իւրեանց, կամեցան զիմ **պատկերիս կերպն քաշելոյ** (Ս. Շահմ., 318):

ՊԱՐԻՍՊ ԱՌԵԱԼ - պարսպի նման շրջապատված: Զժողովեալն յերուսաղեմայ անուամբ իւրն **պարիսպ առեալ** նստեր է և ընդ մեզ մարտնչի բանուրանօք և նենգութեամբ (Դիւան Ս. Յակոբայ, 1933, էջ 120):

ՊԵՏ/ՊԵՏՔ ԱՆԵԼ - 1. բուժել: Պէտք անել. բուժել, օգնել (ՍՍ 1127, 137բ): 2. Այցելել: Պէտ անել. այց առնել (ՍՍ 1127, 134ա):

ՊԻՐԿ ԿԵՆԱԼ - պիրն՝ հաստատուն մնալ: Մեծ ինքրայթօօին և ամենայն ողորմութեամբն իրամանի տակուն **պիրկ կու կենան**, որ է պօդպրեքցի<sup>10</sup> կասեն (Էզօն, 406):

ՊԼԻԿ ԿՏՐԵԼ - պլիկ՝ «պղնձէ կամ արծաք մանրադրամ» (ՄՃԲ), այստեղ՝ դրամ հատել: Սա իրամայեաց **պլիկ կտրել** պղնձէ և սահմանեաց գրդամն տաղմայ զարնել (Դիւան, Ժ, 108): Այս Զաֆարն առանց մուսակմ գալու գնաց. սա ևս իրամայեաց **պլիկ կտրել** (Դիւան, Ժ, 111):

ՊՏՈՒՂ ԲԵՐԵԼ - պտուղ տալ: Կայ և ծառ շաֆթալուի, որ 2 լիրա կու կշռէ մին հետն և ի տարին բոլոր **պտուղ կու բերէ** (Յ. Թութունջ., 309):

ՍԱՂ ԴՈՒՐՍ ԳԱԼ - կենդանի մնալ, փրկվել: Մարդն ամէն **սաղ դուրս ելանք** (Էզօն, 256):

ՍԵՒ ԵՐԵՍ ԳԱՅ - սևերես լինի՝ ամոթանքով մնա: Մեզանէ յետ ինչ մարդ որ այս վերոյ գրեալ գրիս այլ և այլ անէ առ մեզ **սև երես գայ** (Կալվածագր., 158):

ՍԵՒՆ ԳՐԵԼ - սևով (սև մրով) գրել՝ գրանցել, ՅԼՂԲ-ն ունի **սև գիր** «մահը ազդարարող թուղթ»: Ի միուն ամի տասն անգամ բառնի և դմի անուն նի ի սուրբ պատարագն, անունն այն ի **սևն գրեսցի** (Դիւան Ս. Յակոբայ, 1940, 317):

ՍԵՐ ԶԳԵԼ - սեր հաստատել, սիրով վերաբերվել: Անչափ բարութիւն արեր ես իւրեանց հետն և **սեր ծգեր ես** մեր տառապեալ ազգին վերայ (Էզօն, 162):

ՍՍԴ ԴՈՒՐՍ ԳԱԼ - փրկվել, կենդանի մնալ: Մարդն ամէն **սաղ դուրս ելանք** (Էզօն, 256):

ՍԻՆՈՒՌ ԿՏՐԵԼ - սահման կտրել՝ հաստատել, հուն. synoros «սահման, սահմանագիծ» բառից: Տեսաք առաջին թագաւորացն և հայրապետացն հաստատեալ կոնդակսն, սիկէլն և արձանն, որ **սինուռն էին կտրել** (Սանահն., 86):

<sup>10</sup> Ուուսերեն պրոտեկցիա «հովանաւորութիւն» բառից, ուու պրոտեկցիա «հովանավորության ներքո»:

**ՍԻՐՏՆ ՔԱՂՑՐ** - բարեհաճ: Աշխարհի անդորրութիւն և թագաւորաց **սիրտն քաղցր** առ մերային տառապեալ ազգս (Դիւան Ն. Զուղայի, 70):

ՍԻՐՏ ԹՈՒՆԱՅ - սիրտը բարախտել: Յեաշմն<sup>11</sup> ով հետ պահէ ժամք չի լինի, մարդոյ սիրտ չի թռնայ, կայծակի աղէկ է (Դաւրիժ., 456):

ՍՈՒՐ ԶԳԵԼ - սրածություն անել: **Սուր ձգեցին** մէջ քաղաքին / Սատակեցին զիշխան նորին (ՈՒՄՐ, II, 227):

ՎԱԶ ԳԱԼ - հեռու մնալ, ձեռք քաշել: **Վազ չես գալ** մեղաց, մինչեւ յե՞ր գործես (ՈՒՄՐ, II, 660):

ՎԱՅ ԵԿԱՒ - դժբախտություն, չարիք եկավ: **Վայ Եկաւ** ամէնուս վերայ / Ծարաւեցան, ու ջուր չկայ (ՈՒՄՐ, II, 602):

ՎԻԶ ԷԿԱԼ - համաձայնեց, հանձն առավ: Էլչին մեր խաթրին համար **Վիզ Էկալ** հետ տանելոյ (Նշխարդ, 8):

ՎԻԶՆ ՏԱԼ - վիզը կտրել: Այս խանն ինքն իւր թուրն վեր ունի, գնայ այս Շնաւոնիս վերայ, թէ **Վիզն տայ** (Զ. Ագուլ., 161):

ՏԱԿՈՒՆ ԼԻՆԵԼ - տակը՝ ենթակա լինել: Մեր մեծ և բարձր ինփրայթօռութեան ողորմութեան հրամանին **տակուն լիներ**, որ ձեր կալէ համար և ձեր դնջութիւն (Էզօն, 393):

ՏԱՄՊԱՅ ԶԱՐՆԵԼ - դրամ՝ թղթադրամ կնքել՝ տպել, պրսկ. ճամցա «կնիք, կնքված գիր» բառից, հմնտ. ՊԼԻԿ ԿՏՐԵԼ: Սա իրամայեաց պիհկ կտրել պինծէ և սահմանեաց զդրամն **տաղմայ զարնել** (Դիւան, Ժ, 108):

ՏԵՐ ԴԱՌՆԱԼ - սեփականություն ձեռք բերել: Այնչափ տվեց Աստուած, որ թէ տուն, թէ մուլք, թէ աջիաս, թէ փող, ԳՌ թումանի **տէր դառաւ** (Զ. Ագուլ., 85):

ՏԻՐՈՒԹԻՒՆ ԱՆԵԼ - հովանաւորել: Էլչուն նեզիրն պուլղարիցն կաշառ է առեալ, մեզ **տիրութիւն չերաւ** (Էզօն, 319): Մեզ **տիրութիւն առեալ** ազատէ այս իւրիրայիցն (Էզօն, 319):

ՏՂԱՅ ՃՈՂՈՎԵԼ - մանկահավաքը Օսմանյան կայսրությունում (տես նաև ՄԱՍՉ ՃՈՂՈՎԵԼ): Այս փաշան եղեր է պատճառ **տղայ ժողովելոյ**. իսկ միւս **տղայ ժողովելն** եղև թվին ԶԶԶ (Նշխարդ, 42):

ՏՐՈՐ ՏԱԼ - շաղախտել, «տրոր տալ ջրոյն»՝ ջրին խառնել: Եւ բազում մշակս արկին ի գործ, եւ սկսան մշակքն փորել զիողն եւ **տրոր տալ** ջրոյն (Դաւրիժ., 252):

ՓԱՅՅ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԿՆԵԼ - բաժին՝ ժառանգություն հասնել: Մեր հայրենիք ռասար բերինք՝ Ընձանափակի արտն մեզ **փայյ և բաժին ընկաւ** (Կալվածագր., 30):

ՓԱՅՅ ԶԱՐԿԵԼ - գանահարել, ճիպոտահարել: ԶՎարագայ վաքիլ խօջայ խանամիրն և զՎարագայ տէր Մարգարայն ծեծեցին դուլաղասիքն և ամէն մէկին Դճ **փայյտ զարկին** (Դիւան, Ժ, 115):

ՓՈՂ ՈՒՏԵԼ - կաշառը ստանալ: Խանն Մուսաբէկիցն շատ **փող կերաւ**, բալքի Դճ թուման ավել կերաւ (Զ. Ագուլ., 150):

ՓՈՒՉ ԴԱՌՆԱԼ / ԼԻՆԵԼ - անօգուտ լինել, չիրականանալ: ԶԼուսաւորչի հաւատն պաթալ կանեն, ձեր աշխատանքն այլ **փուչ կու դառնայ** (Էզօն, 319): Սորայ դավին մինչի Գ տարի արարին, ախրն **փուչ ելաւ**, փող չի բհաւ եկաւ (Զ. Ագուլ., 72):

<sup>11</sup> Հասպիս քարն է:

ՔԱՍԱԿՈՒՄՆ ԿԱՍԳՆԵԼ - թիկունք կանգնել, հմտ. ՔՕՄԱԿ ԱՆԵԼ: Այդ-ախի չարիք են անում, զատն տալիս էք և նոցա **քամակումն կանգնում** (Դիւան Ն. Զուղայի, 105):

ՔԱՐԻ ԲՈՆԵԼ - քարկոծել: Ասօր՝ շաբաթ օր Յասան աղան **քարի բռնեցին**, փախաւ ճորով խալսեցաւ (Մանր ժամ., I, 216):

ՔՕՄԱԿ ԱՆԵԼ / ԼԽՆԵԼ - օգնել, աջակցել, հմտ. ՔԱՍԱԿՈՒՄՆ ԿԱՍԳՆԵԼ: Իմ սիրելի որդի Յոհան Վարդապետին թև և թիկունք լինիս, զինչ տեղ խօսելէ բան լինի, նորա **քօմակ անես** (Դիւան Ն. Զուղայի, 62): Թուրքի **քօմակ լինելով** զմիմեանս պատերազմեն (Էզօն, 345):

ՔՕԾ ՄՈՐՈՒՔ - այժի մորուք՝ նոսր մորուք: Խստիմալաթէ տըւեալ իբր ապահարզան ի ձեռին ունին այժմ թէ սոքա և թէ սոցին տեսուչ ձևացեալ **քօշ մօրուքն** այն (Դիւան Ս. Յակոբայ, 1932, 250):

\* \* \*

Այսպիսով ներկայացվում է 150 դարձվածային միավոր, որոնցից 100-ը բացակայում են ՅԼՂԲ-ում, այսինքն դրանք կարելի է համարել բուն վաղաշխարհաբարյան դարձվածքներ:

Իբրև ամփոփում պետք է շեշտել մի կարևոր առանձնահատկություն. մեր քաղած այն դարձվածքները, որ հետագա կիրառություն են ստացել, բնորոշ են և ընդհանուր հայերենի թէ՝ արևատյան և թէ՝ արևելյան հատվածների համար: Սրանք գրառվել են այն փուլում, երբ արևմտահայերեն-արևելահայերեն ճյուղավորումներն այսօրվա պատկերացմանը դեռևս չեն գոյացել, և շատ դարձվածքներ ունեն ընդհանուրհայերենյան արժեք, ուստի այս դեպքում տեղին չեն խոսել ԴՄ-ների տարածքային տարբերակման մասին: Կարծում ենք՝ նոր բնագրերի քննության հետ մեկտեղ վաղաշխարհաբարյան դարձվածքների շարքը շարունակ կավելանա:

### Յամառոտագրություններ

**Ակոր.** - Յակոր Փափազյան, Ակոռու Ս. Յակոր վաճքի քյոթուկը, «Բանքեր Մատենադարանի», թ. 12, Եր., 1977, էջ 191-213:

**Աղաւն.** - Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Միաբանք և այցելուք Յայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929:

**Աւ. Տիգր.** - Աւետիք Տիգրանակերտցի, Տէֆքէր գիրք / Աւետիք Պաղտասարեան ընթերցող Տիգրանակերտցի (հոդվածի հեղինակն ամենայն հավանականությամբ Ղևոնդ Ալիշանն է), «Բազմավէպ», 1897:

**Դաւրիծ.** - Առաքել Դաւրիծեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990:

**Թորոս աղբար** - Գարեգին Սրուանձտեանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1884:

**Դիւան, Ժ** - Դիվան Յայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դարեր, իրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912:

**Դիւան Ն. Զուղայի** - Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վաճքի, մասն Ա, Եջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003:

**Դիւան Ս. Յակոբայ** - Դիւան Սուլիք Յակոբայ, Ա-ԺԹ, «Սիոն», 1930 նոյեմբեր - 1941 յուլիս-օգոստոս:

**Դիւան**, II - Դիվան հայ վիմագության, պրակ II, Եր., 1960:

**Ե. Մուշ** - Եղիա Մուշեղեան և իր գրական արտադրութիւնները, Յ. Ուկեան, Հանդէս ամսօրեայ, 1927 թ. տարբեր համարներուն:

**Երեմիա Չելեպի** - Երեմիա Չելեպի Ջոնուրծյանի նամակը Պետրոս Ագուլեցուն / Յ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 311-314:

**Զ. Ագուլ.** - Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, Եր., 1938:

**Զաք.** - Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:

**Կալվածագր.** - Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Եր., 1941:

**Կտակ. Յակ.** - Կտակ Յակոբայ Կաթողիկոսի Զուղայեցւոյ, Լևոն Խաչիկեան, Աշխատութիւններ, հատոր I, Եր., 1995, էջ 318-333:

**ՔԼՂԲ** - Ա. Սուլիիասյան, Ա. Գալստյան, Յայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

**Մ. Շահմ.** - Մահտեսի Շահմուրատի յիշատակարանը / Յ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 315-319:

**Մանր ժամ., I** - Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հատոր I, Եր., 1951:

**Մանր ժամ., II** - Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հատոր II, Եր., 1956:

**ՄՐԲ** - Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009:

**ՄՄ** - Մաշտոցյան Մատենադրան, ձեռ. թ. 1127:

**Յիշ. Սանահն.** - Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քերուկը), աշխատ. Պարոյ Մուլադեանի, Ս. Էջմիածին, 2007:

**Յ. Թութունջ.** - Յովիաննես Թութունջի, Ուղեգրութիւն / Յ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 301-311:

**Յ. Կամենացի** - Յովիաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին խորինու, աշխատ. Յակոբ Անասեանի, Եր., 1964:

**Նշխարը** - Նշխարը մատենագրութեան Յայոց, հրատ. Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1884:

**ՈՒՄՐԲ**, II - Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխատ. Յասմիկ Սահակյանի, հատոր II, Եր., 1987:

**ԷզօՅ** – ЭзօՅ Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы). С.-Петербург, 1898

**Բանալի բառեր** – դարձվածք, գրաբար, վաղ աշխարհաբար, իմաստավիդություն, նոր կազմություններ, բառացանկ

**НОРАЙР ПОГОСЯН – Новые фразеологические единицы в армянских источниках XVI–XVIII веков.** – Арmenistica накопила богатый опыт исследования фразеологизмов. В этой сфере публиковались многочисленные исследования,

изданы словари. Однако с изучением источников позднего средневековья обнаруживаются всё новые идиомы и фразеологические единицы. Автор статьи исследовал ряд произведений XVI–XVIII веков, в которых выявлено множество неизвестных прежде фразеологизмов. Они или не используются в современном армянском языке, или используются в модифицированной форме.

В статье содержится 150 идиом, сто из которых, ранее совершенно неизвестные, не включались во фразеологические словари.

**Ключевые слова:** *фразеологизм, грабар, ашхарабар, значение фразеологизмов, новые формы, словарь фразеологизмов*

**NORAYR POGHOSYAN – New Phraseological Units in the Armenian Sources of XVI-XVIII Centuries.** – Throughout a long period of time Armenology has extensively covered phraseological units in numerous works and dictionaries. However, further studies of original works, particularly those of the Late Middle Ages, reveal many more new phraseological units.

Various works dating back to the period between 16<sup>th</sup> and 18<sup>th</sup> centuries have been studied. As a result of a thorough analysis, a number of new idioms and phraseological expressions were brought to light. Most of these idioms are not in use in Modern Armenian; while those that are considered active normally appear in modified forms.

This article lists 150 new idioms, 100 of which were not included in dictionaries of idioms. They are considered to be genuine idioms of Early Modern Armenian.

**Key words** – *idiom, Old Armenian language - Grabar, New Armenian language – Ash-karabar, semantics of idioms, new forms, vocabulary*